

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

355  
F-99

Հ. Պ.

Հ. Պ. Խ. Հ.

Պոլիետինիկա բայր շենքերի, միացե՛

ՅԱ. ԲՐՈՆԻՏԵ

# ԼԵՆԻՆԸ ՅԵՎ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ

Թեու. բանգ. գ. Մամին

300

355 (47)  
F-91

Խոտական թազմ. Հրատ. պատվերով հրատարակել ե  
Սոսկվայի Ակցիոններական Հրատարակչական  
Ընկերությունը

MAR 2010

## ՅԱՆԱԿ

	ԵՎ
1. Մեր կուսակցությունն և ստեղծել կարմիր բանակի . . . . .	5
2. 23 տարի սրանից առաջ . . . . .	7
3. 1905 թվի հեղափոխությունը . . . . .	12
4. Դեկտեմբերի յան ազգամարտությունը . . . . .	17
5. 1905 թվի հեղափոխության դասելը . . . . .	20
6. Իցիչև զեկավարում և Հոկտեմբերյան ապրու- տամբությունը . . . . .	23
7. Կարմիր գվարդիայից գեղի կարմիր բանակը . . . . .	32
8. Խորձրդային իշխանության համար կարմիր բանակի մղած պայքարի յիսուն շրջանում . . . . .	36
9. Ինչու ճաղթեց կարմիր բանակը . . . . .	45
10. Առաջնարդի պատգամը . . . . .	50

355 (47)

Բ-96  
Ս. Խ. Հ. Պ.

Հ. Ս. Խ. Հ.

Պրոլետարեն բոլոր յերկրների, միացե՛ք

ՅԱ. ԲՐՈՆԻՆ

300  
2637-ԲՐ

ԼԵՆԻՆԸ ՅԵՎ ԿԱՐՄԻՐ  
ԲԱՆԱԿԸ

1003  
97491

Առև. քարզ. Փ. Ծովյան

Պետական Ռազմ. Հրատ. պատվերով հրատարակել և  
Մոսկվայի Ակցիոներական Հրատարակչական  
Հնկերությունը

06 MAR 2013

40.791

Я. БРОНИН

Ленин и Красная  
Армия

на армянск. языке

По заказу Государственного Военного Издательства  
исполнено Московским Акционерным Издательским  
Обществом

ЭРИВАНЬ


1926 г.

ՏՐԵՍՏԻ ԱԽԱԶԻ ՏՊԱՐԱՆ

Գրառ. 170р.

պատ. 5129

Տիրաժ 3000



Դ. Ի. Կերես

## ՄԵՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ Ե ՍՏԵՂԾԵԼ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ

Կարմիր բանակի հիմնավորման որը համարվում  
է 1918 թվի փետրվարի 23-ը: Այդ որը ժողովրդա-  
կան կոմիսարների Խորհուրդը գեկրեա (վորոշում)  
հրատարակեց «կազմակերպել նոր բանակ «Բանվորա-  
ֆյուլացիական կարմիր բանակ» անունով:

Բայց բոլորովին սխալ կը լիներ մտածել, վոր մի-  
այն յոթ տարի առաջ մենք ձեռնարկեցինք կազմա-  
կերպելու հեղափոխության գինված ուժը:

Կոմունիստների—Բոլեգիկների կուսակցությու-  
նը, իր առաջնորդ Լենինի գլխավորությամբ, իր գո-  
յության սկզբից աշխատել և կազմակերպել հեղափո-  
խական ռազմական ուժեր:

Ընկ. Լենինի աշակերտներից մեկը՝ ընկ. Զինով-  
յեվը, ասում է. «Կախաղաններով հարուստ ճանապարհով  
անցնելով, մեր կուսակցությունը վոչ թե մեկ կամ  
յերկու տարում, այլ յերկու տասնյակ տարիներից  
ավելի անշեղ կերպով պատրաստեց կարմիր բանակի  
ապագա կարգը»:

Ահա թե ինչու 1917 թվի հոկտեմբերին տեղի  
ունեցավ այն՝ ինչ վոր շատերին հրաշք եր թվում,  
այդ ժամանակ մի գիշերվա մեջ մեզ մոտ աճեց կար-  
միր Գվարդիան, վորը հետո շատ կարձ ժամանակա-  
միջոցում վերացվեծ կարմիր բանակի:

Սա կուսակցուրյունը, վորին գլխավորում եր  
Վլադիմիր Ելիչ Լենինը, վորին նա ստեղծեց, վորին

Յա Յվիրեց իր արյունը, 20—25 տարիների ընթաց-  
քում պատրաստեց Կարմիր բանակի կազմակերպումը:

Հաղթական Կարմիր բանակի կազմակերպումը  
Կոմունիստական Կուսակցությունը պատրաստեց իր  
յերկար, հաստատակամ պայքարով:

## 23 ՏԱՐԻ ՄՐԱՆԻՑ ԱՌԱՋ

«Ներկայումս, յերեվի, բոլորը կը համաձայնվեն,  
վոր մենք պետք ե մասնենք Երա մասին յեվ պատրա-  
սենք Երա համար»:

Այսպես եր գլուխ իլյիչը 1902 թվին («Ինչ անել»  
գրքում) ցարական կարգերը տապալելու համար զին-  
ված ապստամբության մասին:

Այդ ինչպիսի ժամանակներ եյին:

Այժմ ամեն մի աշխատավոր գիտե, վոր առանց  
պայքարը ղեկավարող կուսակցության հեղափոխու-  
թյան հաղթանակը անհնար եւ:

Կոմունիստական կուսակցությունը բանվոր դա-  
սակարգի առաջապես ջոկատն եւ:

Կուսակցությունը բոլոր աշխատավորներին ցույց  
ե տալիս հաղթանակի ճանապարհը: Այս բանը մենք  
տեսանք մեր յերկրի որինակով, այսպես ե նաև մնա-  
ցած բոլոր յերկրներում: Բայց այն ժամանակները  
(1902 թ.) բանվոր դասակարգը գեռ ամբողջովին չեր  
յուրացրել կուսակցության անհրաժեշտությունը:

Հարկավոր եր մեծ աշխատանք տանել բանվոր-  
ների մեջ կուսակցության խնդիրները պարզաբանե-  
լու համար: Հարկավոր եր կովել այն բոլոր մարդ-  
կանց դեմ, վորոնք բանվորների բարեկամ անվան  
տակ՝ դավաճանորեն չեյին ընդունում կուսակցու-  
թյան անհրաժեշտությունը: Հենց այս աշխատանքն  
ել կատարեց Լենինը «Խոկրա» («Կայձ») թերթի միջո-  
ցով, վորը հրատարակվում եր արտասահմանում և  
ցարական կառավարությունից գաղտնի, տարածվում  
Ռուսաստանում:

Ավելի լրիվ կերպով Լենինը իր հայացքները  
արտահայտեց հիշյալ՝ «Ինչ անել» դրվում:

Լենինը պահանջում եր, վոր կուսակցությունը  
պետք է յերկաթյա կարգապահությամբ համախմբված  
լինի: Թող նա փոքրաթիվ լինի, բայց նրա մեջ պետք  
է ժաման բանվոր դասակարգի զորձին նվիր-  
ված մարտիկներ, պետք է ընդունվեն միայն նրանք,  
ովքեր պատրաստ են ամբողջապես նվիրվելու հեղափո-  
խական պայքարին: Կուսակցական կազմակերպու-  
թյունը պետք է կառուցվի այնպես, — ասում է Լե-  
նինը — վորպեսզի նա ամենալավ կերպով կարողանա  
պատրաստել և ղեկավարել ցարի և կալվածատերերի  
դեմ ուղղված զինված ապստամբությունը:

Այսպիսի կուսակցության ամուր հիմքը պրվեց  
1903 թվի ապրիլ-մայիսյան համագումարին: \*)

Լենինի հետ զնաց համագումարի մեծամասնու-  
թյունը, վորտեղից և առաջ յեկավ Բոլշևիկ (մեծամաս-

\*) Այդ կուսակցության, յերկրորդ համա-  
գումարն եր: Առաջինը կայացավ 1898 թվին:  
Յեկել եյին ընդամենը 9 պատգամավորներ: Այն  
ժամանակ զեռ շատ քիչ եյին գիտակից բան-  
գորներ, վորոնք հասկանում եյին կուսակցության  
կաղմելու անհըաժեշտությունը: Գրեթե բոլոր 9  
ընկերները ձերբակարվեցին ցարական դահճնե-  
րի կողմից, յերբ համագումարը վերջացավ: Դրա  
համար ել չհաջողվեց կուսակցության գոյության  
ուժեղ սկզբնավորություն դնել: Միայն կոչ ար-  
ձակվեց կուսակցություն կաղմելու համար:

Նական անունը: \*) Ստեղծվեց համախմբված մար-  
տական կուսակցություն, վոր ամենազիավոր պայ-  
մանն է աշխատավորեների ազատարման պայքարի  
համար: \*\*)

Կուսակցությունը իր մոտավոր խնդիրն եր հա-  
մարում կռվի պատրաստվելու միապետության դեմ.  
Ընդ ամին իրենց աշխատանքը բոլշևիկները տանում  
եյին վոչ միայն բանվորների շրջանում, այլ նաև  
ջանք եյին թափում փոխազրել գյուղում:

Դեռ այն ժամանակ իլլիչը հասկանում եր, վոր  
յեկող կոփիները, հաջողություն կունենան միայն  
բանվորների և գյուղացիների միանական պայքարով:  
1901 թվին («Պրոլետարիատ և գյուղացիությունը»  
հոդվածում), ընկ. Լենինը, նկարագրելով գյուղացիու-  
թյան հուսահատական զրությունը, ասում է «Զարց

\*) Մեր կուսակցությունը մինչև 1918 թիվը  
կոչվում եր «Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատա-  
կան Բանվորական Կուսակցություն (բոլշևիկնե-  
րի): Կուսակցության 7-րդ համագումարին (1918  
թվի մարտին) նա վերանվանվեց «Ռուսաստանի  
Կոմունիստական Կուսակցության (բոլշևիկների)»  
կրծատ կերպով՝ Ռ. Կ. Կ. (ը):

\*\*) Փոքրամասնությունը գեմ եր Լենինին՝  
մարտական ու կարգապահ կուսակցություն ստեղ-  
ծելուն: Այստեղից ել առաջացավ մենշևիկների  
(փոքրամասնականներ) անունը: Հիմա նրանց  
ամեն մի աշխատավոր ճանաչում ե, վորպես  
Խորհրդային իշխանության ամենավոլերիմ թըշ-  
նամիների: Այն ժամանակ մենշևիկների հետ մի-  
ասին Լենինին դեմ եր նաև ընկ. Տրոցկին:

և առաջ գալիս, ի՞նչ յելք գտնել յեվ ի՞նչ միջոցներով  
ձեռք բերել գրության բարելավումը:

Կապիտալի ճնշումից մանր գյուղացիությունը  
կարող է ազատվել՝ միայն հարելով բանվորական  
շարժման, ողբենով երան սոցիալիզմի համար մղած  
երա պայմանագրին \*):

1903 թվին Իլյիչը մի գրքույկով գիմեց գյուղի  
աղքատներին Յոթերորդ գլխում գրում և 1902 թվի  
գարնան տեղի ունեցած գյուղացիական ապստամբու-  
թյունների մասին (Պոլտավյայի, Խարկովի և ուրիշ նա-  
հանգներում): «Գյուղացիները չդիմացանանչափ ճշն-  
շումներին և սկսեցին լավ վիճակ վնասուի: Գյուղացի-  
ները վորոշեցին—և շատ ճիշտ վճռեցին—վոր ավելի  
լավ և մեռնել՝ կորած մղելով ճնշողների դեմ, քան թե  
մեռնել քաղցից, առանց պայքարի: Բայց գյուղացինե-  
րը լավ վիճակ ձեռք չբերին, Յարական կառավարու-  
թյունը նրանց գեմ զինվորներ ուղարկեց, վորպես  
թշնամիների և գյուղացիները ջարդվեցին, գյուղա-  
ցիների վրա կրակ բաց արին, շատերին սպանեցին,  
գաղանաբար տանջեցին»: «Ռուսական բանվոր դասակարգը—շա-  
րունակում և իլյիչը,—միշտ կը հարգի նահատակների,  
ցարական ծառաների կողմից գնդակահարվածների  
հիշատակը, Այդ նահատակները բանվոր ժողովրդի  
աղատագրման և բախտավորության մարտիկներն

\*) Սոցիալիզմ այնպիսի հասարակակարգ  
է, վորտեղ չկան ձնչվողներ և շահագործողներ:  
Սոցիալիզմի համար են կովում մեր կուսակցու-  
թյունը և բոլոր յերկրների կոմունիստական կու-  
սակցությունները:

եյին... Գյուղակից բանվորները ամբողջ ուժով կաշ-  
խատեն ոգնել գյուղացիներին, պարզ կերպով հասկա-  
նալ, թե ինչո՞ւ ճնշվեց առաջին գյուղացիական ապս-  
տամբությունը (1902 թ.), և ինչպես պետք է անել,  
վորպեսզի հաղթանակը մնա գյուղացիներին և բան-  
վորներին, և չե թե ցարական ծառայողներին,

«Գյուղացիական ապստամբությունը ճնշվեց,  
վորպիսեաւ նա պատրաստված չեր»:

«Գյուղացիական ապստամբությունը ճնշվեց,  
վորպիսեաւ գյուղական պրոլետարիատը զեռ միու-  
րյուն չուներ բաղադրի պրոլետարիատի հետ»:

«Վորպեսզի ապստամբությունը հաջողվի, ան-  
հրաժեօն եր, վոր նա լիներ գիտակից յեվ պատրաս-  
տված, ընդգրկեր ամբողջ Ռուսաստանը ու միուրյուն  
լիներ բաղադրի բանվորության հետ»:

Ծուտով վրա հասավ 1905 թ. հեղափոխությունը:  
Ապստամբությունը իսկապես վոր ընդգրկեց ամբողջ  
Ռուսաստանը:

## 1905 թՎԻ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

1905 թվի հունվարի 9-ին Պետերբուրգի (ներկայումս Լենինգրադի) տասնյակ հազարավոր բանվորներ դիմեցին դեպի Զմեռային պալատը, Նիկոլայ թագավորին խնդրելու համար իրենց անտանելի ծանր զրությունը թեթևացնելու մասին։ Այն ժամանակ դեռ շատ բանվորներ հավատում էին, վոր կարելի յի «վողորմած թագավորից» ազատություն խընդրել և զնացին նրա մոտ «ձմարտություն և արդարություն փնտուելու»։ Արյունարբու դահիճ Նիկոլայը բանվորներին հրացանների և գնդացիքների համազարկով պատասխանեց։ Հայրուրավոր բանվորներ փոփղին պալատի առաջ հրապարակի, վրա։ Այս «Այրունալի կիրակին» բանվոր գասակարգի աչքը բաց արեց։ Բանվորությունն սկսեց հասկանալ, վոր «բանվորների ազատազրումը, իրենց բանվորների գործ ե», վոր այդ ազատազրման համար պետք և ամենից առաջ տապալել միապետությունը։

«Բանվոր գասակարգը—զրում և իլլիչը հունվարի 12 ին—բազաբացիական կովի մեծ զաս ստացավ... Ժողովրդի զինավորումը հեղափոխական մոմենտի մոտակա խնդիրներից մեկն և հանդիսանում... միայն զինաված ժողովուրդը կարող է ժողորդական ազատության իսկական հենարանը լինել»։

Կուսակցությունն ասաց՝ ցարիզմի դեմ զինված պայքարը սկսվում եւ Մեր կուսակցության Յ. Ր. համագումարը, վոր տեղի ունեցավ 1905 թվի ապրիլ—մայիսին, վորոշեց։

«Զինված ազստամբությամբ միապետության դեմ անմիջական պայքարը մղելու համար պրոլետարիատին կազմակերպելու խընդիրը՝ ներկա հեղափոխական մոմենտում հանդիսանում ե կուսակցության անհետաձգելի և ամենագլխավոր խնդիրներից մեկը։

Անհրաժեշտ է ձեռք առնել ամենայեռանդուն միջոցներ պրոլետարիատին զինելու, զինված ազըտամբության ծրագիր մշակելու և այդ ազստամբությունը անմիջականորեն ղեկավարելու համար, հավաքելով դրա համար, պիտք յեղած զեպքում, կուսակցական աշխատողների հատուկ խմբակներ»։

Կուսակցությունը յեռուն ախատանք եր տանում զինված ազստամբությունը պատրաստելու, համար։ Առաջ յեկան սազմական կուսակցական կազմակերպություններ, Բանվորներից կազմվեցին մարտական խմբեր (դրային), ամեն ջանք թափվում եր մեծ քանակությամբ զենք զերքելու համար, 1905 թվի այս մարտական խմբերն ել հանդիսանում են ազատականիր Բանակի առաջին ջոկատները։

Կուսակցությունը քիչ ուշագություն չդարձեց ցարական բանակի զիվորների մեջ հեղափոխական ագիտացիա մղելու վրա։ Ընկ. Զինովիը պատմում ե. «Դեռ 1905 թ. մենք, բոլշևիկներս, աշխատանք եյինք տանում հին ցարական բանակի անլեգալ (զաղտնի) հեղափոխական խմբակներում։ Յես հիշում եմ, թե ինչպես ինձ հաջողվեց, լինելով կուսակցության կենտրոնական կոմիտեյի անդամներից մեկը, կազմակերպել հեղափոխական զինվորների առաջին խմբակներ ծար-

սկոյե Սելոյում \*), Ոխտայում, ծովափին, նավակների վրա, մենք հավաքեցինք զինվոր—հեղափոխականների առաջին տասնյակներ, վորոնց կրթում եյինք՝ վորպես գոլշեկներ»:

Բոլշևիկները պարզաբանում եյին զինվորներին, վոր նրանց ստիպում են կրակել իրենց յեղբայր՝ բանվորների և գյուղացիների վրա, վոր անհրաժեշտ ե սվինը դարձնել ցարի ծառաների և կալվածատերերի դեմ:

Հեղափոխական պայքարը ամսե—ամիս ավելի և ավելի ուժեղանում եր, Քաղաքներում գործադրուներ եյին, Բանվորները թողել եյին աշխատանքը, ցույցեր եյին կազմակերպում և աշխատավորների համար ազատություն եյին պահանջում, Այս գործադրուներն ու ցույցերը շատ անգամ վերջանում եյին ցարական զինվորների հետ տեղի ունեցան արյունակի ընդարումներով, Մի քանի տեղերում, Ողեսայում, Լոձում Կովկասում տեղի ունեցան իսկական փողոցային կըսկիներ, վորոնց մեջ բանվորների մարտական խմբերը ցույց տվին պրոլետարական հերոսության որինակներ, Զինվորների մեջ նկատվեցին չենթարկվելու առանձին դեպքեր, պահեստայինների (Յապաշնիք) հուզումներ, առանձին վաշտեր և նույնիսկ գնդեր հրաժարվեցին կրակել իրենց յեղբայր-բանվորների վրա: Բոլշևիկները կանգնել եյին այս ամբողջ պայքարի գլուխը և միշտ առաջին շարքերումն եյին:

Բայց այս բոլոր շարժումները իրարից շատ եյին կտրված, Բանվորների և գյուղացիների պայքարի մեջ բավականաչափ համերաշխություն չկար, Մենք ար-

\* ) Լենինգրադին մոտիկ մի վայր ե:

դեն կազդացինք լենինի այն խոսքերը, վոր սիայն բանվորների և գյուղացիների միասնական պայքարը կարող ե՝ ապահովել հաղթանակը: Այժմ հեղափոխական պայքարը արագորեն լայնանում եր, որից որ բանվորների պայքարը սրվում եր—անհրաժեշտ եր գյուղացիների վճռական ոգնությունը:

«Ավելի կարեորը և ավելի դժվարը—գրում ե իւլիչը—գյուղացիության մեջ աշխատելն ե: Գյուղացիությունը մանր տնտեսատերերի դասակարգ ե, Այդ դասակարգը ավելի քիչ նպաստավոր գրության մեջ ե գտնվում աղատության և սոցիալիզմի համար մղվող պայքարում, բան բանվորները: Գյուղացիները մեծ ձեռնարկությունների մեջ միացած չեն, այլ բաժանված են մասն, կղղիացած տնտեսությունների: Գյուղացիները չեն տեսնում իրենց առաջ այնպես բաց, հայտնի, միասնական թշնամու, ինչպես բանվորները՝ կապիտալիստին են տեսնում...

«Գիտակից բանվորեր, իսկական և հիմական վանդը ուսաւկան հեղափոխության համար գյուղացիական մասսայի հետամացությունն ե, նրա պայքար մղելու անվճականությունն ե: Պայքարեցեք այդ վտանգի դեմ, ճշմարտությունը ասացեք մինչև վերջը:

«Դանդաղել վտանգավոր ե—ասում ե իւլիչը հունիսի 20-ին—անհրաժեշտ ե միացնել և համախմբել այն մասնավոր ապստամբությունները, վորոնք ծագում են ամեն տեղ: Այդ բոնկումները առանձին առանձին անուժ են: Ցարական կառավարության կազմակերպված ուժը կարող ե ջարդել ապստամբներին իրար հետևից, յեթե շարժումը նույնպես տարերայ-

նորեն, գանդաղ կերպով կը փոխազրկի քաղաքից քաղաք, շրջանից շրջան:

Բայց միանալով, այդ բանկումները կարող են վերածվել հեղափոխական բոցի, այնպիսի հոկա հեղեղի, վորի գեմ չի գիմանա աժխարեի վոչ մի ուժը:

«Յեկայդ միացումը կատարվում է հաղարավոր այնպիսի ճանապարհներով, զորոնք անծանոթ են մեզ, վորոնց մասին չենք ել կասկածում: Ժողովուրդը սովորում է հեղափոխություն առաջ բերել այդ բոկումների և ընդհարումների միջոցով...»

«Խոսք չկա: Դեռ բանվորները շատ մոթն են և ընկճած, դեռ չենք խոսում գյուղացիների սասին: Բայց տեսեք, թե ինչպիս և մեջքը ուղղում յերեկվաստրուկը: Ինչպես փայլում է ազատության կրակը նույնիսկ կիսահանդչած աչքերում: Նայեցք գյուղացիական շարժման: Նա կորված է, անզիտակից, մենք գիտենք միայն ճշմարտության մի կտոր նրա չափի և բնույթի մասին:»

Բայց մենք հասաւ գիտենք, վոր գիտակից բանվորներն ու պայքարի նախապարհի վրա կանգնող գյուղացիները, յերկու խոսից կը հասկանան իրար, վոր լույսի յուրաքանչյուր նառագայթ երանց ավելի սեր կերպով կմիացնի ազատության պայքարի համեր:

## ԴԵԿՏԵՄԲԵՐՅԱՆ ԱՊԱՍԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ

Առաջին խոշոր մարտական յելույթը «Պոտյոմկին» զրահանավի վրա ծագած ապստամբությունն երա Ապստամբությունը ընկվեց 1905 թ. հունիսի 14-ին, մեր կուսակցության կրիմի միության աշխատանքի շնորհիք: Զրահապատը կարմիր գրող բարձրացրեց և կոչ արձակից սև ծովյան ամբողջ նախատորմիզին միանալու «Պոտյոմկին»-ին: 13 որ «Պոտյոմկին»-ը թափառեց Սե ծովի վրա և միայն ուումինական իշխանության հանձննվեց:

Այս ապստամբությունը բոլցիկների բանակում և նավատորմում տարած աշխատանքների առաջին և խոշոր հաջողությունն եր:

Հաջորդ խոշոր գեղքը, Հոկտեմբերյան ընդհանուր գործադուն եր: Նա ամբողջ բանվոր գասակարգի կողմից տարվեց այնպես կազմակերպված և միահամուռ, վոր ցարական կառավարությունը ստիպված յեղավ մի շարք զիջումներ անհլ:

Հոկտեմբերի 17-ին առանձին «մանիֆեստով» ցարը խոսացավ բավարարել բանվորների պահանջների մի մասը: Բայց բանվոր դասակարգը հասկացավ, վոր այդ զիջումները արվեցին խարելու և աշխատավորներին հանգստացնելու համար, մինչև վոր ցարական կառավարությունը նորից ուժեր կը հավաքի: Իւրիշի խոսքերով բանվոր դասակարգը ասաց իրեն:

«Հեղափոխությունը վերջնականապես կը ջախջախի և յերկրի յերեսից կը սրբի արյունաբու ցարի գահը

այն ժամանակ, յերբ բանվորները նորից կը կանգնեն և իրենց հետ կը տանեն գյուղացիության։

Պայքարը շարունակվում եր ամբողջ կատաղությամբ, մինչև վոր դեկտեմբեր ամսին նա հասավ իր բարձրագույն կետին։ Դեկտեմբերի 7.ին (նոր տոմարով դեկտ. 20.-ին), ընդհանուր գործադուլից հետո, Մոսկվայում սկսվեց դեկտեմբերյան նշանավոր ապստամբությունը։ Գրեթե 10 որ շարունակվեց փողոցներում բարիկադային կռիվ։ Ցարական կառավարության կողմում շատ զորքեր կային, Ամեն մի բանվոր իր դեմք ուներ վոչ պակաս քան 10 ցարական զինվոր։ Ցարական զինվորները շատ լավ եյին զինված։ Զնայած դրան բանվորները պայքարում եյին հաստատակամ և քաջարի։ Նրանք ցույց տվին ամբողջ աշխարհին, վոր բանվոր դասակարգը կարող է լավ կռվել ամենածանր պայմաններում, յերբ պայքարի գլուխը կանգնած է բոլշեկիների պես մի կուսակցություն։

Յերբ պարզվեց ապստամբության պարտությունը, սենշակիներն ու մյուս դավաճանները սկսեցին փընթիւնթալ, թե՝ «պետք չեր զենք վերցնել։ Լենինն անողոք կերպով մարակում եր այդ վախկուներին և դավաճաններին։

— Ընդհակառակն— զրում է նա «Մոսկովյան ապստամբության դասեր» հոդվածում, — հարկավոր երավելի վեռական, յեռանգուն յեվ հարձակողական կերպով զենք վերցնել։

«Հիշենք, վոր մոտենում է մեծ մասսայական պայքարը. մահվան արհամարանքը պետք է տարածվի մասսաների մեջ և ապահովի հաղթանակը... Հարձակում և վոչ թե պաշտպանություն՝ պետք է լինի

մասսանների լողունգը, անողոք կերպով ջնջել թշնամիներին. այս կը լինի մասսանների խնդիրը»։

Իլյիչը կոչ արեց ուսումնասիրել դեկտեմբերյան ապստամբության դասերը, և ինքը ցույց տվեց այդ դասերը։

«Ապստամբությունը արվեստ ե... այդ արվեստի գլխավոր որենքը—կատաղի համարձակությունն ու անվերագարձ—վճռական հարձակումն ե։

Իլյիչի պես, դեկտեմբերյան ապստամբության մասին, արձագանգ տվեց ամբողջ կուսակցությունը։ Բոլշեկիների կողմից 4-րդ կուսակցական համագումարին (1906 թ. ապրիլին) առաջարկած բանաձեռնում մենք կարդում ենք։

«Ս. նիւրածես և ավելի յեռանգուն աօխատանք տանել մարտական խմբակների բիվը ավելացնելու, երանց կազմակերպությունները բարելավելու յեվ ամեն եեսակ զենքեր հայրիայրելու համար։

«Ս. նիւրածես և ուժեղացնել աօխատանքը զորեւրի մեջ։

Ս. նող զյուղացիական շարժումները նկատի ունենալով... ցանկալի յե ջանք բափել բանվորների յեվ զյուղացիների դործողությունները միացնելու, ըստ հնարավորության կազմակերպելու համար միաժամանակ յեվ միասնական մարտական յելույթները։

## 1905 թվի ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԸ

Դեկտեմբերյան ապստամբությունից հետո տեղի ունեցան առանձին ապստամբություններ զանազան տեղերում։ Կրոնշտագումար ապստամբությունը կազմակերպվեց Պիտերի բոլշևիկյան ռազմական կազմակերպության կողմից։ 1906 թվի գարնանն ուժեղացան գյուղացիական շարժումները։ Բայց յարական կառավարությունը ժամանակ ունեցավ ուժեղանալ, պայքարը թուլացավ։ 1906 թվի վերջին պարզվեց, վոր հեղափոխությունը պարտվել է։

Ի՞նչով և բացատրվում այս պարտությունը։

Ամենից առաջ նրանով, վոր գյուղացիները բավարար չափով չոգնեցին բանվորներին։

«Հաւածված ե—գրում ե իլլիչը՝ 1910 թվին հեղափոխության դասերի մասին գրած հոգվածում, վոր գործարանային բանօգորուրյան մեծամասնուրյունը (մինչեվ յերեք հինգերորդը) մասնակցեց հեղափոխական պայքարին, գործադուլերին, իսկ գյուղացիներից, անկասկած, միայն փոքրամասնուրյունը, յերեքի վոյ ավել բան մի հինգերուգ կամ մի չորրորդ մասը։ Գյուղացիները պայքարում եին ավելի բիշ հաստատակամուրյամբ, շատ եյին կտրված, ավելի պակաս զիտակից եյին և զեռ հույս ունեյին «բանյութեկա ցարի» բարուրյան վրա։

Բացի այդ գյուղացիների յելույթները միաժամանակ չեյին ընթանում բանվորների ապստամբության հետ։ Բանվորական ապստամբությունները տե-

ղի ունենցան, մեծ մասամբ, 1905 թվին։ Վճռական ապստամբությունը, ինչպես մենք տեսանք, տեղի ունեցավ 1905 թվի դեկտեմբերին։ Դյուղացիական ապշտամբություններն ուժեղացան միայն 1906 թվին։ Դժվար չեր ցարի համար ջարդել բանվորներին և գյուղացիներին առանձին-առանձին։

Գլխավորապես գյուղացիներից բաղկացած բանակը, ցարի ծառաների ձեռքին զենք հանդիսացավ, բանվորների և գյուղացիների ապստամբությունը ճրնշելու դործում։

Գյուղացիները զործով պետք ե ոզնեն բանվորներին, աներածես ե բանվորների յեվ գյուղացիների մարտական միուրյուն—այս ե 1905 թվի հեղափոխուրյան գլխավոր գասը։

1905 թվի հեղափոխությունը պայքարի համար մեծ փորձ տվեց։ Առաջին անգամ յերկան յեկան և հերոսարար կովեցին բանվորների մարտական խմբեր, Դեկտեմբերիյան ապստամբությունը ցույց տվեց, վոր բանվոր դասակարգը կարող է վճռական մարտ մղել աշխատավորների թշնամիների դեմ։ Հաջորդ հեղափոխության ժամանակ հաղթանակելու, հեղափոխական սազմական ուժերը լավ դասավորելու համար, անհրաժեշտ եր ուսումնասիրել 1905 թվի հեղափոխության բոլոր սխաներն ու հաջողությունները։

«Բնկ. Լենինը—ոլատմում ե ընկ. Զինովիը—ամենառաջադիր կերպով ամբողջ մանրամասնություններով ուսումնասիրեց այս մարտական խմբերի ծագման պատմությունը։ Դեռ արտասահմանում, ընկ. Լենինը ամեն ջանք թափեց, գտնելու մարտական խմբակների

կենդանի մնացած անդամներին, վորպեսզի հարցաքննի  
և իմանա բոլոր մանրամասնությունները»:

Կալվածատերերի արյունալի թագավորության  
բոլոր տարիներին, կ. և ակցությունը վոչ մի բոպե  
ձեռք չքաշեց ապագա պայքարի համար ռազմական  
ուժեր ստեղծելու աշխատանքից: Հակահեղափախության  
որերին մի ֆինլանդական գյուղում բոլշևիկները հա-  
վաքեցին ռազմական մարտական կաղմակերպություն-  
ների համառուսական կոնֆերանս: Կուսակցությունը  
շարունակեց իր աշխատանքը ցարական բանակի գին-  
վորների մեջ:

Մենչեկները և մնացած բոլոր համաձայնողա-  
կանները կոչ եյին անում բանվորներին այսուհետև  
հրաժարվելու ամեն մի պայքարից: Իսկ բոլշևիկները  
անդադար զբաղված եյին՝ բանվորների գինված ու-  
ժերը ի մի հավաքելով: Ամբողջ կուսակցության անու-  
նից այդ որերին իլյիչն ասում եր.

«Թուսական պրոլետարիատը կարող է պարձենալ  
երանով, վոր 1905 թվին իր զեկավարությամբ, ըս-  
տուկենի ազգը առաջին անգամ զերածվեց ցարիզմի  
վրա հարձակվող միլիոնավոր զորքի, հեղափոխու-  
թյան բանակի: Նույն այդ պրոլետարիատը ներկա-  
յումս կարող է տանել համբերատար լեզ հաստառա-  
աշխատանք գաստիարակելու յեվ պատրասելու հեղա-  
փոխական ավելի եզր ուժերի նոր կազմեր: «Թան-  
գասերը իզուր չեն կորչի: Թուսական ծողովուրգը  
այն չի, ինչ վոր եր մինչեւ 1905 թիվը: Պրոլետա-  
րիատը գարեցրեց երան պայքարի, Պրոլետարիատը կը  
տանի երան զեպի հաղթանակա:

## ԻԼՅԻՉԸ ՂԵԿԱՎԱՐՈՒՄ Ե ՀՈԿՏԵՄԲԵ- ՐՅԱՆ ԱՊԱՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ

1914 թվի ոգոստոսի 4-ին սկսվեց իմպերալիս-  
տական պատերազմը: Այդ պատերազմը սկսեցին զա-  
նազան յերկների գիշատիչ իմպերալիստները, աշ-  
խարհի հարստությունները բաժանելու համար: Պա-  
տերազմը կովող յերկների տնտեսությունը քայլայեց:  
Շահագործողների փառքի համար կոտորվեցին միլիո-  
նավոր բանվորներ և գյուղացիներ: Աշխատավորներին  
հիմարացնելու համար դիմեցին ամեն տեսակ խարի-  
յության: Բուրժուական բոլոր գրչակների և տերտեր-  
ների կողմից պատերազմը «սրբազն» համարվեց,  
վորը իրը թե վարվում ե աշխատավորների յերջանկու-  
թյան համար: Այսպիսի ազիտացիա տարան նաև  
մենչեկները և նսերները, \*) վորոնք միշտ թագնվում  
եին «ժողովրդի բարեկամ» անվան տակ:

\*) Աշխատավորների գավաճան մի կուսակ-  
ցություն: Մենչեկները ավելի հիմարացնում  
եյին բանվորներին, իսկ նսերները՝ գյուղացինե-  
րին: Նրանք գյուղացիներին ո հող և ազատու-  
թյուն: Եյին խոստանում, իսկ յերբ 1917 թվին  
իշխանությունն իրենց ձեռքն անցավ, նսեր-  
ները սկսեցին գնդակահարել այն գյուղացինե-  
րին, վորոնք կալվածատերերից հողը խլում  
եյին: 1917 թվի հոկտեմբերին, յերբ բանվորներն  
ու գյուղացիները իշխանությունն իրենց ձեռքը  
վեցրին, նսերները մնացած բոլոր սպիտակ  
գվարդիականների հետ կովեցին Խորհրդային իշ-  
խանության դեմ, վորպեսզի հողը նորից կալվա-  
ծատերերին հանձնեն:

Մենակ բոլշևիկները պատերազմի հենց առաջին որից սկսեցին մերկացնել նրա խւկական նպատակը: Պատերազմի սկզբի շրջանում բոլշևիկների հրատարակած մանիքստում (դիմում) կոչ եր արված «իմպերալիստական պատերազմը վերածելու քաղաքացիական պատերազմի»: Այդ նշանակում եւ, կապիտալիստների և կալվածատերերի փառքի համար մի յերկրի աշխատավորները չպետք եւ կովեն մյուս յերկրի աշխատավորների դեմ, այլ ընդհակառակը՝ պետք եւ շահագործվողների պայքար առաջացնեն շահագործողների դեմ ամեն մի յերկրի բանվորն ու գյուղացին պետք եւ կովի իր յերկրի կապիտալիստի և կալվածատիրոջ դեմ: Բոլշևիկները ցարական բանակում և նավատորմիդրում նույնպես ճշտորեն պատմում եյին, թե ի՞նչի համար եւ պատերազմը:

1917 թվի փետրվարի 27-ին (նոր տոմարով մարտի 12-ին) Պիտերի բանվորներն ապստամբեցին և տապալեցին ցարին: Զինվորները միացան բանվորներին: Վոչ մի զինվորական մաս ցարին չպաշտպանեց: Այդպես պատահեց, վորովհետև բայլշևիկները պատմել եյին բանակին ճշմարտությունը ցարիզմի մասին:

Փետրվարյան հեղափոխության ժամանակ իլլիչը Շվեյցարիայումն եր, Նա Ռուսաստան յեկավ ապրելի 4-ին (նոր տոմարով ապրելի 17-ին):

Թեև ցարական կարգերը տապալվել եյին, սակայն բանվորներն ու գյուղացիները դեռ իշխանությունն իրենց ձեռքը չեյին ձգել:

Ցարի և նրա ծառաների փոխարեն կապիտալիստների և կալվածատերերի ուրիշ ներկայացուցիչ:

Ներն եյին անցել «Ժամանակավոր Կառավարության» գլուխ: Նրանց թունդ պաշտպանում եյին մենշենիկներն ու եսերները: Նոր կառավարողները ծածկվում եյին ազատության և նման գեղեցիկ խոսքերով: Թալանչխական պատերազմը, վոր մղվում եր բանվորական և գյուղացիական արյան հեղեղի գնով, ներկայացվում եր, վորպես հեղափոխության համար մղվող պայքար: Գյուղացիներին արգելվում եր վրավել կալվածատերերի հողերը: Բանվորների աշխատանքի պայմանները վատանում եյին:

Ընկ լենինը և նրա հետ ամբողջ կուսակցությունն ասացին. հարկավոր եւ պատրաստվել յերկրորդ հեղափոխության համար: Բանվորները պետք եւ գրավեն իշխանությունը: Բայլշևիկները բացատրում եյին աշխատավորներին իրերի իսկական դրությունը, նրանք պահանջում եյին վերջ տալ խայտառակ պատերազմին, պահանջում եյին անմիջապես գյուղացիներին հանձնել կալվածատերերի հողերը. «Այսող իշխանությունը խորհուրդներին»—բացականչում եյին բայլշևիկները: Բայց Խորհրդային իշխանությունը ձեռք բերել կարելի յեւ միայն զինված ուժով, Յեվ բայլշևիկները յերկու գլխավոր խնդիրներ են գնում զինել բանվորներին և աշխատանք տանել հին բանակի զինվորների մեջ:

Կալվածատերերը, կապիտալիստները, մենշենիկներն ու եսերները—բոլորը միահամուռ ուժերով կատալի հալածանք սկսեցին բայլշևիկների դիմ: Բայլշևիկներին հալածում, բանտարկում եյին և ամենակեղուս մեղադրանքներ եյին բարդուած նրանց վրա

Այս գժվար պայմաններում, բայլշևիկներն անո-

ըինակելի անձնվիրությամբ տանում եյին իրենց աշխատանքները, բացատրելով բանվորներին և գյուղացիներին նրանց առաջ կանգնած խնդիրների մասին։ Առտնց հոգնելու առաջ եր գնում բանվորների զինման աշխատանքը։ Փետրվարյան հեղափոխությունից 7 որ հետո կենտրոնական կոմիտեյին կից հավաքվեց զինվորական կազմակերպություն։ 1905 թվի մարտական խմբերի որինակով ամենաառաջավոր բանվորների շրջանից կազմակերպվեցին ապագա Կարմիր Գվարդիայի առաջին ջոկատները։ Ժամանակավոր Կառավարությունը բոլոր միջոցներով աշխատում եր խանգարել դրան։

Հնդհատակյա, կառավարության գործակալներից գաղտնի, գործարանները պաշտպանելու կամ քաղաքում կարգ պահպանող միջիցիայի անվան տակ և ուրիշ ճանապարհներով առաջ եր գնում բանվորների զինման գործը։ Պիտերում, Մոսկվայում, Խարկովում, Ռուբալում, Դոնի ավազանում, Խանովո-Վոզնեսենսկում և մեծ քանակությամբ բանվորներ ունեցող բոլոր շրջաններում առաջ եր գնում կարմիր Գվարդիայի շինարարության գործը։ Բայլշեկիների գործունեյությունը նույնպես տարածվում եր հին բանակի շարքերում։ Այստեղ կազմակերպվում եյին բայլշեկիներն ըլիչներ, վորոնց շուրջը համախմբվում եյին հեղափոխական զինվորներ։ Բայլշեկիներն առանձին հաջողություն ունեյին նավաստիների մեջ։

Իսկ շատ անգամ դուրս եր գալիս զինվորների միտինգներում, և հեղափոխական գործի համար նորանոր ուժեր եր դրավում։

Հնկ. Զիովյեվը հիշատակում է հլյիչի այսպիսի

մի յելույթ Սեմյոնովյան գնդի վաշտում, վորոնք այն ժամանակ թշնամաբար եյին տրամադրված մեր գեմ։

«Ընկերները համոզում եյին հլյիչին այնտեղ չգնալ, վորովհետեւ վախենում եյին, վոր հլյիչի համար այդ կարող ե վատ վախճան ունենալ։ Ցերք մենք յեկանք զորանոցը, մեզ վիճակվեց անցնել հայրուրավոր յերիտասարդ սպաների միջից, վորոնք նայում եյին հլյիչին՝ ատամնելով կրծտացնելով։»

«Նա ճանաչում եր ժողովրդին, ճանաչում եր գյուղացիներին և զինվորերին՝ մեր բոլորից լավ։ Նա խոսում եր այդ մարդկանց հետ այնպես, վոր այդ հասկանա մասսան, ամբողջ զորանոցը, վորին գըրգուել եյին հլյիչի դեմ, և վորն առաջին վայրկյանին սուլոցներով եր լսում նրան—մի ժամկց հետո դուրս բերեց նրան իր ձեռների վրա։»

Քանի գնում եր, բանվորներն ու գյուղացիները ավելի և ավելի եյին հավատում, վոր բայլշեկիները ձիշտ են ասում։ Իրար հետեւից բանվորական պատգամավորական խորհուրդները, զինվորական կոմիտեները սկսեցին անցնել բայլշեկիների կողմը, կուսակցությունը տենդորեն պատրաստվում եր ապստամբության համար։ Յեկ այդ ամբողջ պատրաստությունն ընթանում եր հլյիչի զեկավարությամբ։ Ստիպված լինելով ապրել ժամանակավոր Կառավարությունից գաղտնի, նա կուսակցության աշխատանքին ուղղություն եր տալիս։ Իր թագստոցից նա ուղարկում է կուսակցության Պիտերի և Մոսկայի կոմիտեներին կոչնամակներ։

«Դեպքերն այնքան պարզ ցույց են տալիս մեզ

մեր ինդիրը, վոր դանդաղելը դառնում և ուղղակի հանցանք»:

Նա տալիս ե նույն իսկ ապստամբության ծրագիրը:  
«Համաձայնեցնել մեր յերեք զինավոր ուժերը,  
նավատորմը, բանվորներին և զորամասներն այնպես,  
վորպեսզի ինչ գնով և ինչ կորուստներ եւ վոր կրելու  
լինենք, կարելի լինի գրավել առաջին հերթին, ա) հե-  
սախոսը, բ) հեռագիրը, գ) յերկաթուղու կայարանը,  
դ) կամուրջները»:

«Զոկել ամենավճռական տարրերին (մեր օհար-  
գածայինները) (ударников) և բանվոր յերիտասար-  
դությունն, ինչպես նաև լավագույն նախատիները) և  
նրանցից կաղմել վոչ մեծ ջոկատներ, նրանցով կա-  
րեռագույն կետերը գրավելու, ամեն տեղ և բոլոր  
կարեռ ոպերատիվ գործողություններին մասնակցե-  
լու համար, ինչպես որինակ».

«Երջապատել և կարել Պիտերը, վերցնել քա-  
ղաքը նավատորմի, բանվորների և զինվորների հա-  
մաձայնեցված գրոհով—այսպես ե խնդիրը (զաձագ),  
վորը պահանջում է հմտություն և յեռակի համար-  
ձակություն»:

Կազմել ջոկատներ, հրացան և սումբներ (բոմբ)  
ունեցող լավագույն բանվորներից թշնամու կենտրոն-  
ների (յունկերական դպրոցները, հեռախոսը և հեռա-  
զերը և այլն) \*) վրա հարձակվելու և շրջապատելու  
համար. «մեռնենք բոլորով, բայց հակառակորդին  
բաց չթողնենք» լոգունգով։

\*) Յունկերական դպրոցներում պատրաստվում  
են սպաներ կալվածատերերի և կապիտալիստների  
վորդիներից։

Հեղափոխության ապստամբության մասնակից-  
ներից մեկը, վորը յեկել եր իլյիչի մոտ Հոկտեմբեր-  
յան հեղաշրջումից առաջ, պատմում ե.

«Տգեղ տնակի դուռը հատուկ թըխկթըխկոցից  
հետո բացվում ե»:

«Կարճ ժամանակ սպասում ենք մաքուր սենյա-  
կում, մի քանի խոսք փոխանակելով տանտիրոջ հետ,  
վոր ամբակազմ մի բանվոր ե»:

«Մանում և ակնոցով մի ծերունի, ժպտում աշ-  
քերով, սպիտակած և հասարակ հագնված, կարծում  
ես կամ վատ դերձակ ե, կամ հին գրքեր վաճառող:  
կեղծ ծամը և ակնոցները գեն ձգվեցին և ահա մեր  
իլյիչը» \*)

«Կարճ և անհամբեր հարցեր ե տալիս»:

«Ի՞նչ դրության մեջ և նավատորմը»:

«Ի՞նչքան կարող ե տալ Պիտերը»:

«Իսկ կրոնշտամպալը»:

«Հյուսիսային Փրանտը»:

«Պիտերում»:

«Գոհ չե Հանդիմանում ե, վոր հյուսիսային  
Փրոնտի հետ թույլ ենք կապվել»:

— «Ինչու նավատիները քիչ են գալիս»:

«Վախենում են մերկացնել ճակատը».

«Միթե չեն հասկանում, վոր հեղափոխությունը  
Պիտերում ավելի մեծ վահնգի մեջ և քան ճակատում»:

— «Այնքան ել չեն հասկանում»:

«Հաստատ տոնով և անհրեր կամքով ավելաց-  
րեց».

\*) Իլյիչը դեռ այն ժամանակ ծածկվում եր Ժա-  
մանկավոր կառավարության հետապնդումից։

